



162. ԱՆԽՆԵԼՔ ՄԱՐԹԸ

Մին մարթ շատ քյանիր ա ինոնմ ըպրելիս: Մին օր տա ասում ա քյիննական ըմ ըստուծեն կոշտը կյենգյատ, ասըեմ խե՞ ինձ բախտ լըս տամ, քշեր-ցիրեկ անում ըմ, անում, էլլա քյանիր ըմ ապրում:

Հղե յա ինոնմ, քյիննամ: Հղեննի մին կբուռկյուռալիս արշ ա պըտահում: Էտ մարթը հըրցնում ա, թա խե տի՞ լըս անում, արշն ասում ա.—Կլթիրս ցավում ա: Համ էլ հըրցնում ա, թա հիշտեղ ը՞ս քյիննամ, տա թա՝ քյիննամ ըմ ըստուծեն կոշտը կյենգյատ, վըեր էսքան ըխշադում ըմ, ըխշադում, էլլա քյանիր ըմ մնամ: Արշն ասում ա.—Դե վըեր քյիննաս ըստուծեն կոշտը, կասըես իստի մին արշ կլթիր միշտ ցըվելիս ա ինոնմ, հինչ անե՞, վըեր ցավը կտրե: Տա թա՝ լավ:

Հղե յա ինոնմ, քյիննամ: Շատ ա քյիննամ, թա խրեզ, մին վար անող մարթու վա պըտահում, պարյօր տամ: Էտ վար անողը հըրցնում ա, թա հիշտեղ ը՞ս քյիննամ, տա ասում ա.—Քյիննամ ըմ ըստուծեն կոշտը կյենգյատ, վըեր իստի քշեր-ցիրեկ ըխշադում ըմ, էլլա քյանիր ըմ ապրում: Էտ վար անողը թա՝ դե վըեր քյիննաս, կասըես իստի մին մարթ ասալ ա իմ արտումըս մին մըեծ տանձի ծառ կա, տրա շորս անգյանը հիշքան սըերմ ըմ շաղ տամ, փանում շի, գյոնդիմ լըմ թա հինչ անըեմ: Տա թա՝ լավ: Խիլլա տըեղ վըեր քյիննամ ա, հըսնում ա մին շհար: Էտ շհարին միյդա-

նումը ծշում ա, տըեսնում մին ծիյավուր մարթ բիդի ուրան կյամ
ա, հըրցնում, թա իմ երգիիրումըս քեզ նոր ըմ տըեսնում,
տու օրիշ երգիիրու մարթ ըս, ասե տըեսնամ հիշտեղ ը՞ս թյինամ:
Տա թա քյինամ ըմ ըստուծեն կոշտը կյենգյատ, վըեր էսքան ըխ-
շադում ըմ, ինձ բախտ չի տամ, միշտ քյասիր ըմ ապրում: Էտ
ծիյավուրն ասում ա.—Ես էս երգիիրին թաքավըերն ըմ, վըեր քյի-
նաս ըստուծեն կոշտը, կասես էսինչ երգիիրին թաքավըերն ա-
սալ ա շորս ընդյունիս ինձանա ուժեղ թաքավըեր չի կա, իմ զոր-
քը, իմ զինքը, իմ կարողությունը լոխնընան շատ ա, էլլա ես
միշտ կովումը հախտվում ըմ, պենը հինշումն ա՝, հինչ անըեմ,
վըեր հախտվըեմփուչ. Տա ասում ա.—Լավ, կատօմ:

Հղե յա ինում, քյինամ: Շատ վըեր քյինամ ա, հըսնում ա մին
հեռու տըեղ՝ շորս անգյունը լոխ թուխավըկալած, վըեր մաննըտ
մարթու աշկ կոխըես, տըեսնալ չի: Թուխապեն մաշավը վըեր անց
ա կենամ, քյինամ ա տըեսնամ մին որադ տըեղ սիպտակ մըրքավ
մին հլիվուր մարթ նստած: Պարլոր ա տամ, մոտանում: Էտ հլի-
վուրը հըրցնում ա, թա հիշտեղ ը՞ս քյինամ, տա ասում ա.—
Քյինամ ըմ ըստուծեն կոշտը կյենգյատ: Հլիվուրն ասում ա.—
Աստուծը հենց ես ըմ, ասե տըեսնամ հինչ կա: Էտ մարթն ասում
ա.—Էս ա քանի տարե յա, թշեր-ցիրեկ ըխշադում ըմ, ըխշադում,
էլլա քյասիր ըմ ապրում, ինձ բախտ լրս տամ, վըեր ես էլ լավ
ապրըեմ: Աստուծն ասում ա.—Թեզ բախտ տուվըե, քյինա: Էտ
մարթը թա՝ պա հղենինի իստի մին արշ ա պըտահալ, տա յել ա-
սալ ա արտումըս իստի մին տանձի կա, հիշքան վարում ըմ, էտ
տանձի ծառեն շորս անգյունը արտ չի փըսնում, էսինչ շիհարումն
էլ էտ երգիիրին թաքավըերը պըտահեց, ասեց իմ զորքը, իմ զեն-
քը, իմ կարողությունը, իմ օժը լոխնընան շատ ա, էս ա քանի
տարե յա հուր և հըետ կողեկ ըմ անում, լոխ ինձ հախտում ըն:
Աստուծը թա՝ դե քյինալիս լոխնընան առաջ էտ թաքավըերեն ըս
պըտըհըլական, վըեր հըրցնե, կասես տու կենեց ըս, տրա հետե
լոխ լոխ քե հախտում, վըեր փուակվըես, մարթու քյինամ, էս վախ-
տը միշտ հըդաըլական ըս. ետնան էլ էն վար անող հլիվուրն ա
պըտըհըլական, վըեր հըրցնե, կասես էն տանձի ծառեն տակըեն
մին կարաս վըեսկե կա, էն վըեսկես պիտի տուն օնքե, վըեր շորս
անգյունը կընանչի, իսկ վըեր արշն էլ պըտահե, կասես թա էտ
ընդյուններեն անխելք ու քյասիր մարթ պըտահե, փըռնե, օտըե:
Էտ մարթը ուժխացած հղե յա ինում, քյինամ: Առաջ թաքա-
վըերն ա պըտահում: հըրցնում ա, թա աստուծ հինչ ա առալ, էտ

մարթը թա՝ ասալ ա տու կնեզյ ըս, տրա հետե լըլ կողի քու զոր-
քըտ, օժըտ լոխնընան շատ ա, կարում ըստ հախտընս, վըեր փը-
սակվընս, մարթու թիինաս, լոխնինին հըխտըլական ըս: Տա լել
ասում ա.—Դե էտ ա տու մարթ ըս իլի¹, եթ ինձնընհատ փսակվե,
տընու էս երգիիրին թաքավըերը, ես էլ թաքուհին, համ տու կըհը-
րուատանաս, համ էլ օրիշ թաքավըերնե կարել լըն մըեր երգիիրը
վըեննը տինին: Էտ մարթը թա՝ չէ՛, ես թայդի լըմ, աստուծ ինձ
բախտ ա տուպալ, քյինամ ըմ:

Հղե լա ինձնմ, քյինամ: Էն վար անողն էլ վըեր պըտահում ա,
ասում ա.—Աստուծ ասալ ա էն տանձի ծառեն տակեն մին կարաս
վըեսկե կա, պիտի տուս օնընս, վըեր ծառըն շորս անգյունը կը-
նանչի: Էտ վար անող մարթն ասում ա.—Եթ քյիմագյ ըրա վըես-
կեն տուս օնընքյ, համ կես կանենքյ, համ էլ իմ արտըս կըկը-
նանչի: Տա թա՝ չէ՛ ես թայդի լըմ, քյինամ ըմ, աստուծ ինձ բախտ
ա տուպալ:

Հղե լա ինձնմ, քյինամ: Արշն ա պըտահում, հըրցնում, թա՝
աստուծ քեզ հինչ ա՝ ասալ, տա թա աստուծ ինձ բախտ ա տու-
պալ, իստի մին վար անող ա պըտահալ, տրա արտեն մաշին էլ
մին տանձի կա, տանձուն շորս ընգյունին արտը կընանշում չի,
աստուծ տրան էլ ասալ ա էտ տանձում տակեն մին կարաս վըես-
կե կա, տուս պիտի օնընս, վըեր արտը կընանչի, էտ մարթն էլ
ինձ ասալ ա եթ քյիմագյ ըրա վըեսկեն տուս օնընքյ կես անը-
նեքյ, քյեցալ լըմ: Էսհինչ երգիիրումն էլ իստի մին թաքավըեր ա
պըտահալ, նա յէլ ասալ ա.—Ես լոխնընան շատ զորք օնընմ, լոխնը-
նան ուժեղ ըմ, համմա լոխ ինձ հախտում ըն, տրա կյենգյատն
էլ ըմ հըսցըրալ ըստութեն: Աստուծ տրան էլ ասալ ա.—տու կնեզյ
ըս, տրա հետե լըս հախտըում, վըեր փսակվընս, մարթու քյինաս,
լոխնինին հըդտըլական ըս. Էտ թաքավըերն² ինձ էլ ասալ ա եթ
տու ինձնընետ փսակվե, էս երգիիրին թաքավըերը տընու, քյեցալ
լըմ, ասալ ըմ աստուծ ինձ բախտ ա տուպալ, ինձ վըել մին պեն
հարկավըեր չի: Արշը թա՝ պա ի՞նձ հինչ ա ասալ: Տա թա՝ քեզ էլ
ասալ ա հիշտեղ վըեր անխընք, քյասիթ մարթ աշեսնաս, կըվըռ-
նընս օտընս, կըլիսետ ցավը կըտրըլական ա: Արշն ասում ա.—
Հիշքան մտածում ըմ, քըզանա անխընք մարթ չի պըտըհըլական,
լիհա էն ա փոնընմ, քեզ օտընմ: Համ ասում ա, համ փոնում,
տրան վըեր մաշկում:

¹ Առևային Դարարազում «մարթ», ասում են աղամարդուն (Ս. Բ.):

² Դարարազի բարրառում «թագուհի» բառը շատ քիշ է զորեած-
պամ: